

ՀՀ ՔՐԵԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳԻՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՅԵՐ

ԼԱԼԱՅԱՆ Կ. Ա.

Քննարկվող օրենսգիրքն ընդունվել է 1998 թ. հուլիսի 1-ին և ուժի մեջ է մտել կամ գործողության է դրվել 1999 թ. հունվարի 12-ին: Անցած տասը տարիների ընթացքում՝ 2008 թ. հուլիսի 1-ի դրությամբ դրանում կատարվել են 534 փոփոխություններ ու լրացումներ, որոնցից 504-ը՝ 2006 և 2007 թթ., (263-ը՝ 2006 թ., իսկ 2007 թ.՝ 241 փոփոխություն և լրացում):

Օրենսդրական փոփոխությունները, որպես կանոն, համարվում են հասարակական կյանքում տնտեսական, սոցիալական և քաղաքական վերափոխությունների անխուսափելի հետևանք: Դրանք նըպատակ ունեն հասարակության մեջ ամրապնդելու օրինականության, իրավակարգի, միջազգային իրավունքի հիմնարար սկզբունքները: Հասկանալի է, որ ինչքան էլ օրենսդրությունը ճիշտ արտացոլի կյանքի երևույթները, միևնույն է, բացարձակապես ամբողջական լինել չի կարող, քանի որ կյանքի երևույթներին հատուկ են անընդհատ փոփոխություններն ու զարգացումները: Մակայն չենք կարծում, թե երկու տարվա ընթացքում Հայաստանի հասարակական կյանքում այնքան փոփոխություններ են տեղի ունեցել, որոնք անխուսափելիորեն դարձել են օրենսգրքի հարյուրավոր փոփոխությունների ու լրացումների պատճառ: Յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ, այդ թվում նաև օրենսգիրքը, իր ձևով ու բովանդակությամբ պետք է համապատասխանի օրենսդրական տեխնիկայի որոշակի կանոնների, մեթոդների և հնարքների: Դրանց միջոցով է, որ ապահովվում են օրենսդրության դրույթների շարադրանքի և բովանդակության համապատասխանությունը, իրավական նյութի պարզությունն ու մատչելիությունը: Նորմատիվ ակտերի լեզուն պետք է լինի հստակ ու մատչելի, քանզի օրենքները գրվում են ոչ միայն իրավագետների և իրավակիրառողների, այլև ժողովրդի լայն խավերի համար: Օրենսդրության ամբողջ համակարգում պետք է բացառվեն հակասությունները (թեկուզ մեկ հակասությունը արժեզրկում է օրենսգիրքը), իսկ գործածվող եզրույթները պետք է լինեն ճշգրիտ ու որոշակի: Ահա օրենսդրական տեխնիկայի այն հիմնարար պահանջներից մի քանիսը, որոնք երևի թե անտեսվել կամ դուրս են մնացել հայ օրենսդիրների տեսադաշտից՝ քրեական դատավարության օրենսգիրքը կազմելիս:

Այլ պետությունների օրենսդրություններից օրենքների փոխառումը (ռեցեպցիան) ընդունված ու թույլատրելի կարգ է: Դա օգնում է ազգային օրենսդրության կատարելագործմանը, սակայն, եթե փոխառվող օրենքը համապատասխանում է օրենքն ընդօրինակող պետության ազգային առանձնահատկություններին, չեն աղավաղվում փոխառվող օրենքի բովանդակությունն ու միտքը և, որ

կարևոր է՝ կուրորեն չի ընդունվում անիմաստ կամ անորոշ որևէ եզրույթ, որն արդեն իսկ այդ պետության իրավագետների շրջանում դարձել է քննադատության առարկա: Օրինակ՝ քրեական դատավարության օրենսգրքի 417 հոդվածում նշված է՝ «Վճռաբեկ դատարանը դատական նիստում գործը քննում է ողջամիտ ժամկետում» (ընդգծումը մերն է - Լ. Կ.): Քանի՞ օրը կամ ամիսն է համարվում ողջամիտ, հայտնի չէ: Ըստ երևույթին, դա թողնված է դատական նիստը վարողի խղճին: Ի դեպ, այդ արտահայտությունը ընդօրինակվել է Մարդու իրավունքների պաշտպանության մասին կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետից, որը ժամանակին հանվել է միջազգային համաձայնագրի (պակտի) 14-րդ հոդվածով՝ Մարդու իրավունքների եվրոպական դատարանին հղված բազմաթիվ բողոքների հետևանքով¹:

Օրենքի լեզվին անհարիր բառային գունագարդումները հաճախ խախտում են օրենքի պարզությունը, իրավադրույթների շարադրման համառոտությունը և երբեմն էլ խանգարում են օրենքի տրամաբանական ընկալումը: Վերցնենք Քր. դատ. օրենսգրքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի շարադրանքը, որտեղ ասվում է. «Քրեական հետապնդման մարմինն իրավունք չունի կասկածյալի վիճակում ձերբակալվածին պահել 72 ժամից ավելի, իսկ անագատության մեջ պահելու հետ չկապված խափանման միջոց կիրառելիս (ընդգծումը մերն է - Լ. Կ.) ոչ ավելի քան 7 օր»: Մտքի սխալ չկա, սակայն ի՞նչը կխանգարեր, եթե այդ երկար լեզվախաղի փոխարեն իրավաբանական լեզվով հստակորեն նշվեր «իսկ կալանքի հետ չկապված խափանման միջոց կիրառելիս» դարձվածը:

Օրենսգրքի մի շարք հոդվածներում շրջանառվում է «քրեական օրենքով չթույլատրված արարք» դարձվածը (Քր. դատ. օր. 107 հոդ. 4-րդ կետ, 129 հոդ. 1-ին մասի 1-ին կետ, 130 հոդ. 1-ին մաս, 132 հոդ. 1-ին մասի 1-ին կետ և այլն): Քր. դատ. օր. 450, 452, 457-460 հոդվածների բովանդակությունից երևում է, որ նշված հասկացությունը կիրառվել է անմեղսունակ ճանաչված անձանց արարքները հանցագործությունից տարբերակելու նպատակով, որն իր հերթին հանգեցրել է էական սխալի: Հարկ է նշել, որ դա ՌԴ քրեական դատավարության գործող օրենսգրքում տեղ գտած սխալի աղավաղված վերարտադրությունն է ՀՀ քր. դատ. օրենսգրքում:

Ռուսաստանի Դաշնության 2000 թ. մայիսի 1-ի դրությամբ գործող քրեական դատավարության օրենսգրքում անմեղսունակ ճանաչված անձանց արարքները տարբերակելու նպատակով կիրառվել է «հանրորեն վտանգավոր արարք» հասկացությունը, և դա ճիշտ էր այն առումով, որ անմեղսունակ անձի կատարածը թեև հանրորեն վտանգավոր, սակայն հանցագործություն չէ՝ նրանում մեղքի բացակայության պատճառով (ՌԴ քր. դատ. օր. հ. 403-413):

Հետագայում, 2007 թ. ապրիլի 1-ի դրությամբ գործող ՌԴ քր. դատ. օրենսգրքում կիրառվում է «քրեական օրենքով արգելված ա-

¹ *Sté u Egorov C. E., Права человека в уголовном процессе: международные стандарты и российское законодательство, М., 2008, с. 166-167.*

րարք» հասկացությունը (ՀՀ քր. դատ օր.-ում՝ «քրեական օրենքով չթույլատրված արարք»), որի հիմքում, ըստ երևույթին, ընկած է ՌԴ քրեական օրենսգրքում հանցագործության բնորոշման մեջ տեղ գտած սխալը: Դրա 14 հոդ. 1-ին մասում հանցագործությունը բնորոշվել է որպես մեղավորությամբ կատարված հանրորեն վտանգավոր և քրեական օրենսգրքով արգելված արարք: Ինչպես երևում է, այս բնորոշման մեջ հանցագործության երկու կարևոր՝ հանրորեն վտանգավորություն և քրեական հակաօրինականություն (օրենսգրքով արգելված արարք) հատկանիշներին ավելացել է նաև «մեղավորություն» հատկանիշը, այն դեպքում, երբ վերջինս քրեական հակաօրինականության անհրաժեշտ տարրն է, որը և չի վիճարկվում իրավաբանների կողմից: Այսպես, իրավաբանական տարբեր հրատարակություններում նշված է, որ հակաօրինականությունը հանցագործության այն հատկանիշն է, որը նշանակում է կատարված հանրորեն վտանգավոր և մեղսավոր արարքի արգելվածությունը քրեական օրենքով²: Արարքի քրեական հակաօրինականությունը ենթադրում է այն կատարող անձի որոշակի հոգեբանական վերաբերմունքը այդ արարքի նկատմամբ³ (այսինքն՝ մեղքը): Եվ չնայած դրան, հանցագործություն հասկացության մեջ մեղավորության հիշատակումը ռուս քրեագետները հիմնավորում են նրանով, որ մեղքը հանցագործության պարտադիր սուբյեկտիվ հատկանիշն է⁴ և, որ դրա պարտադիր հիշատակումը պայմանավորված է օբյեկտիվ մեղսայնացման անթույլատրելիությամբ⁵: Բայց եթե տվյալ հատկանիշն իր էությանմբ ածանցյալ է քրեական հակաօրինականությունից (իսկ դա, իրոք, այդպես է), ապա պարզ է, որ հանցագործություն հասկացության մեջ վերջինիս առկայությունն այն «տպավորությունն է թողնում, թե մեղքը հանցակազմից դուրս է գտնվում»⁶:

Հանցագործություն հասկացության մեջ քրեական հակաօրինականության հատկանիշից մեղքի արհեստական անջատումը, եթե ինչ-որ ձևով արդարացվում է (այն էլ ոչ հիմնավոր), ապա անմեղսունակ ճանաչված անձանց արարքը քրեական հակաօրինականության հատկանիշով (քրեական օրենքով արգելված արարք) անվանելը ոչնչով չի արդարացվում, քանի որ դա նշանակում է ընդունել, թե անմեղսունակները հանրորեն վտանգավոր արարքը կատարել են մեղավորությամբ, կամ որ նույնն է, գիտակցել են, թե ինչ են կատարում և կարողացել են դեկլարել իրենց գործողությունները:

² *Տե՛ս Новое уголовное право России. Общая часть, М., 1996, с. 38. Комментарий к Уголовному кодексу Российской Федерации, М., 1997, с. 19.*

³ *Տե՛ս Красиков Ю. А., Алакаев А. М., Понятие преступления. Множественность преступлений. Курс лекций, М., 1996, с. 73. Լալայան Վ. Ա., Քրեական իրավունք, ընդհանուր և հատուկ մասեր, Ե., 2004, էջ 59:*

⁴ *Տե՛ս Курс уголовного права. Общая часть, т. 1, М., 1999, с. 141; Уголовное право, часть общая, часть особенная, М., 1999, с. 64.*

⁵ *Տե՛ս Уголовное право, часть общая, часть особенная, с. 64.*

⁶ *Հայաստանի Հանրապետության քրեական իրավունք, ընդհանուր մաս, Ե., 2000, էջ 79:*

Հայ օրենսդիրներն այս հարցում ավելի «առաջ են» գնացել: ՀՀ քր. դատ. օր.-ի 456 հոդվածում նշվել է՝ «Անձը, որի նկատմամբ իրականացվում է բժշկական բնույթի հարկադրական միջոցներ կիրառելու վարույթ, իրավունք ունի «իմանալ հանրորեն վտանգավոր որ արարքի կատարումն է նրան մեղսագրվում» (ընդգծումը մերն է - Լ. Կ.): ՌԴ քր. դատ. օր.-ի 438 հոդվածում գոնե նշված է, որ օրինական ներկայացուցիչը իրավունք ունի իմանալ, թե քրեական օրենքով արգելված ինչպիսի արարքի մեջ է մերկացվում (уличается) իր կողմից ներկայացվող անձը⁷: Եվ այսպես, հայերենում օրինական ներկայացուցիչը փոխարինվել է հոգեկան հիվանդով, իսկ մերկացվում է (уличается) բառը թարգմանվել է որպես մեղսագրում: Եվ այս դեպքում անհասկանալի է, թե ինչու է անձը ենթարկվում ոչ թե քրեական պատասխանատվության, այլ բժշկական բնույթի հարկադրանքի միջոցների, եթե նա կարող է գիտակցել մեղքը: Հավանաբար, այստեղ գործ ունենք լեզվական անտեղյակության հետ, որն իր հերթին անմտություն է ծնել:

Իսկ առհասարակ, ակնհայտ է, որ իրավական մտքի զարգացման շնորհիվ ստեղծված և ժամանակի քննությունը բռնած հասկացություններում անհամարժեք փոխարինումը, սխալ թարգմանությունները, այլ պետությունների օրենսդրական ակտերից մեքենայաբար, իսկ երբեմն էլ աղավաղված ընդօրինակումները հենց այն պատճառներն են, որոնցով պայմանավորված են՝ ՀՀ քր. դատավարության օրենսգրքի վրիպումները: Կարծում ենք՝ օրենսգիրքը գերծ կլիներ վերը նշված թերություններից, եթե «քրեական օրենքով չթույլատրված արարք» բառերի փոխարեն գործածվեին համընդհանուր ճանաչում ստացած «հանցագործություն», իսկ անմեղսունակ անձանց դեպքում՝ «հանրորեն վտանգավոր արարք» հասկացությունները:

Նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտերի վերանայման փուլը քրեական դատավարության ինքնուրույն փուլերից մեկն է, որն ունի իր խնդիրները, դատավարական գործունեության յուրահատկությունները և դրանում մասնակցող իր սուբյեկտների շրջանակները: Չնայած այդ ինստիտուտն անհայտ չէր ոչ Հայաստանի նախկինում գործող և ոչ էլ այլ երկրների քրեական դատավարության օրենսդրություններին, բայց, այնուամենայնիվ, անհասկանալի պատճառով դուրս էր մնացել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքից, որը վերականգնվեց միայն 2007 թ. դեկտեմբերին, այսինքն՝ օրենսգրքի ընդունումից շուրջ 9 տարի հետո (օրենսգրքի փոփոխության ևս մեկ պատճառ): Թեկուզ ուշացումով, այնուհանդերձ, այդ բացը վերացվեց, սակայն ոչ առանց թերության: Օրենսգրքի 426¹ հոդվածի համաձայն՝ «դատական ակտը նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով վերանայում է դատական ակտ կայացրած այն առաջին ատյանի դատարանը, որը քննել է համապատասխան գործը կամ նյութը»: Նույն օրենսգրքի 426³ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի շարադրանքից երևում է, որ այդ կարգի

⁷ См. у **Безлеткин Б. Т.**, *Уголовный процесс России, М., 2008, с. 437.*

դատական ակտերը վերանայվում են, եթե «օրինական ուժի մեջ մտած դատական ակտով հաստատված են դատավորների հանցավոր գործողությունները, որոնք թույլ են տվել տվյալ գործը քննելիս»: Դուրս է գալիս, որ նոր երևան եկած կամ նոր հանգամանքներով դատական ակտը պետք է վերանայի առաջին ատյանի այն նույն դատարանը, որը նախկինում գործը կամ նյութը քննելիս թույլ է տվել հանցավոր գործողությունները: Կարծում ենք՝ օրենքի այդ հակասությունը կվերացվեր, եթե 426¹ հոդվածի՝ «որը քննել է համապատասխան գործը կամ նյութը» դարձվածից հետո կցվեր «բացառությամբ սույն օրենսգրքի 426³ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված դեպքերի» հավելումը:

Քրեական դատավարության օրենսգրքի 3-րդ բաժինը նվիրված է դատավարության սուբյեկտների՝ «մասնակիցների» դատավարական կարգավիճակին և լիազորություններին (52-87 հոդվածներ): Դրանցում հստակ և սպառիչ կարգով թվարկված են դատախազի, քննիչի, հետաքննության մարմնի և մյուս սուբյեկտների լիազորությունները, նրանց իրավունքներն ու պարտականությունները: Եվ չնայած դրան, նշված բոլոր հոդվածներում ամենուր ասված է, թե այդ սուբյեկտները իրականացնում են նաև «սույն օրենսգրքով նախատեսված այլ լիազորություններ կամ այլ իրավունքներ ու պարտականություններ»: Հետագա օրենսգրքերում «այլ լիազորություններ կսահմանվեն թե ոչ՝ առայժմ անհայտ է, իսկ գործող օրենսգրքի իրավանորմերում, բացի 52-87 հոդվածներից, «այլ լիազորություններ» նախատեսված չեն: Օրենսգրքի ընդհանուր մասի 52-87 հոդվածների և հատուկ մասի համապատասխան հոդվածների համադրումից երևում է, որ հատուկ մասում նախատեսված են ոչ թե դատավարության սուբյեկտների նոր «լիազորություններ», այլ սահմանված են ընդհանուր մասում նախատեսված լիազորությունների կամ իրավունքների և պարտականությունների իրականացման ձևերն ու կարգը: Ուրեմն, այս հարցում ևս օրենսգրքում նոր փոփոխություններ կատարելու անհրաժեշտությունը դառնում է անխուսափելի:

Վերջերս (ՀՀ ՊՏ N 66(590), 18.12.07, 26.12.07) ՀՀ քրեական դատավարության օրենսգրք է ներմուծվել դատավարության մի կարգ (ըստ երևույթին, ՌԴ քրեական դատավարության օրենսգրքից), որով դատաքննության բովանդակությունն ու այն եզրափակող դատավճիռը հենվում են ոչ թե ապացույցների դատական հետազոտման արդյունքների, այլ կողմերի դիրքորոշման և նրանց կամ-քի արտահայտության վրա (ՀՀ քր. դատ. օր. 9¹ բաժին, 45¹ գլուխ, 375¹ – 375⁴ հոդվածներ): Բայց հարկ է նշել, որ եթե ՌԴ քր. դատ. օր.-ի 314 հոդվածով արագացված դատավարություն կիրառելու՝ մեղադրյալի կամ ամբաստանյալի ցանկությունը կարող է իրականացվել պետական կամ մասնավոր մեղադրողի և տուժողի համաձայնության դեպքում, ապա ՀՀ քր. դատ. օր.-ի 375¹ հոդվածում մասնավոր մեղադրողի և տուժողի իրավունքները (համաձայնությունը) ակնհայտորեն անտեսվել են: Նշված հոդվածի 1-ն մասում ասված է՝ «եթե մեղադրողը մեղադրական
եզրակացությունում
չի

առարկել արագացված կարգ կիրառելու դեմ, ապա ամբաստանյալը կամ մեղադրյալն իրեն առաջադրված մեղադրանքի հետ համաձայնվելու դեպքում իրավունք ունի միջնորդելու արագացված դատական քննության կարգ կիրառելու այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը»:

Հայտնի է, որ քրեական գործով մեղադրական եզրակացությունը կազմում է կամ քննիչը կամ հետաքննությունն կատարող անձը, կամ օրենքով նախատեսված առանձին դեպքերում՝ նաև դատախազը: Հետևապես, արագացված դատավարության կարգ կիրառելու համաձայնությունը «կնքվում է» այդ անձանց և մեղադրյալի միջև, իսկ տուժողի (եթե այդպիսին կա), ինչպես նաև մասնավոր մեղադրանքի գործերով՝ մասնավոր մեղադրողի համաձայնությունը, ըստ նշված օրենքի, որևէ նշանակություն չունի: Այս դեպքում պարզ չէ, թե ինչպիսի լուծում պետք է ստանա այն քրեական գործը, որում տուժողը կամ մասնավոր մեղադրողը համաձայն չեն արագացված դատական կարգի կիրառմանը: Ինչպե՞ս պետք է պաշտպանվի այդ հարցում նրանց ռոտահարված իրավունքը: Ավելին, դժվար չէ նկատել, որ նշված կարգը հղի է հանցանք գործելու թաքնված նախադրյալներով: Օրինակ՝ բացառված չեն այն դեպքերը, երբ մեղադրյալն իր կատարած մի քանի հանցանքներից մեկն ընդունելով՝ համաձայնվում է արագացված դատաքննության կարգ կիրառելուն, իսկ մեղադրական եզրակացություն կազմող անձն այդ մասին իմանալով հանդերձ, հանցավոր համաձայնության գալով ընդառաջում է նրան: Կամ մեղադրյալն իր հանցակիցներին թաքցնելու նպատակով իրեն մեղավոր է ճանաչում որևէ կոնկրետ հանցագործության մեջ, կամ ինքնամեղսագրում է մեկ այլ անձի, ասենք, իր հարազատներից մեկի կատարածը և այլն: Նման դեպքերը եզակի չեն դատական պրակտիկայում, սակայն դրանք պարզել արագացված դատաքննության ընթացքում՝ հնարավոր չէ, քանի որ, ըստ քր. դատ. օր.-ի 375³ հոդվածի V մասի՝ «դատարանը արագացված կարգով դատական քննություն անցկացնելիս քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարում, սակայն, «ուսումնասիրում է ամբաստանյալի անձը բնութագրող տվյալները, պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող ու ծանրացնող հանգամանքները»: Այլ կերպ ասած, դատարանը հենվում է այն տվյալների վրա, որոնք ձեռք են բերվել քրեական գործի հետաքննության կամ նախաքննության ընթացքում: Դատարանի վերջնական որոշման լիարժեքությունը այս դեպքում պայմանավորված կլինի նրանով, թե ինչ ճշտությամբ է նախաքննությունն կատարող անձն իրականացրել քր. դատ. օր.-ի 17 հոդվածով ամրագրված «գործի հանգամանքների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտման» սկզբունքը:

Դատական քննության արագացված կարգը, որն իրավամբ դարձել է մասնագետների վեճի առարկա (ոչ միայն Հայաստանում), ակնհայտորեն հակասում է հանրաճանաչ անմեղության կանխա-

վարկածի սկզբունքի այն պահանջին, ըստ որի, «հանցագործության համար կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով դատարանի օրինական ուժի մեջ մտած դատավճռով» (քր. դատ. օր. 18 հոդված, 1-ին մաս):

Ինչպես տեսնում ենք, հոդվածում մատնանշված է մի կարևոր հատկանիշ, այն է՝ «կասկածվողը կամ մեղադրվողը համարվում է անմեղ, քանի դեռ նրա մեղավորությունն ապացուցված չէ սույն օրենսգրքով սահմանված կարգով...»: Մինչդեռ, արագացված դատաքննության դեպքում դատավճիռ է կայացվում առանց կասկածյալի կամ մեղադրյալի մեղավորության հաստատման: Տվյալ դեպքում դատարանը ոչ թե ապացուցում է անձի մեղավորությունը, այլ հաստատում է մեղադրողի ներկայացրած եզրակացությունը:

Քրեական դատավարության գործող օրենսգիրքն ընդունելիս թվում է՝ փորձ է արվել քննչական (հետախուզական) ձևից անցնել մեղադրական ձևին՝ ընդլայնելով մրցակցության տարրերը, մինչդեռ դատաքննության արագացված կարգի կիրառմամբ, փաստորեն, դատարանը հանդես է գալիս որպես մեղադրող կողմ, և դա այն դեպքում, երբ քրեական դատավարության մրցակցության սկզբունքի համաձայն (քր. դատ. օր. 23 հոդ.), դատարանը պետք է արտահայտի միայն իրավունքի շահերը՝ հանդես չգալով ոչ մեղադրանքի և ոչ էլ պաշտպանության կողմում: Այլ կերպ, արագացված դատաքննության կարգ կիրառելով, դատարանը վերածվում է ոչ թե արդարադատություն իրականացնող կամ անմեղության կանխավարկածի սկզբունքը պաշտպանող, այլ քրեական հետապնդում իրականացնող մարմնի: Ավելին, ՀՀ քր. դատ. օր.-ի 358 հոդ. 3-րդ մասի համաձայն՝ դատարանի դատավճիռը հիմնավորված է, եթե դրա հետևությունները հիմնված են միայն դատաքննության ժամանակ հետազոտված ապացույցների վրա, այդ ապացույցները բավարար են մեղադրանքը գնահատելու համար, դատարանի կողմից հաստատված ճանաչված հանգամանքները համապատասխանում են դատարանում հետազոտված ապացույցներին:

Կնշանակի՝ մի կողմից նույն օրենսգրքով պահանջվում է դատավճիռը հիմնավորել միայն դատաքննությամբ հետազոտված ապացույցներով, մյուս կողմից, դատարանում դատավճիռ կայացնել՝ առանց ապացույցների հետազոտման: Եթե ընդունում ենք քր. դատ. օր.-ի 358 հոդվածի 3-րդ մասի պահանջը (որն օրինական է), ապա արագացված դատաքննության կարգի կիրառմամբ կայացվող դատավճիռները պետք է համարել անհիմն, հետևապես և անօրինական, այլապես 358 հոդվածի 3-րդ մասի առկայությունն օրենսգրքում դառնում է ձևական, կամ այն կարող է վերաբերել միայն գործերի քննության ընդհանուր կարգին: Չնայած ակնհայտ է, որ օրենսգրքում գործերի քննության մեկ միասնական կարգ կարող է լինել, քանզի նույն հարցի վերաբերյալ երկակի մոտեցումներն անխուսափելիորեն կհանգեցնեն և հանգեցնում են օրինականության սկզբունքի խախտումներին:

Արագացված դատաքննության կարգի կիրառմամբ իմաստազրկվում է նաև քր. դատ. օր.-ի 306 հոդ. 3-րդ մասի և 309¹ հոդվածի 1-ին մասի առկայությունն օրենսգրքում: Դրանցից առաջինում ասված է՝ «Դատախազը պարտավոր է հրաժարվել մեղադրանքից, եթե իր համոզմամբ, այն չի հաստատվել դատական քննության ընթացքում», իսկ ըստ 309¹ հոդ. 1-ին մասի՝ «Եթե առաջին ատյանի դատարանում դատական քննության ընթացքում (ընգծումները մերն են – Լ. Կ.) մեղադրողը գտնում է, որ առաջադրված մեղադրանքը խստացման կամ մեղմացման առումով ենթակա է լրացման կամ փոփոխման, քանի որ ի հայտ են եկել այնպիսի հանգամանքներ, որոնք հայտնի չեն եղել և չէին կարող հայտնի լինել մինչդատական վարույթում...», ապա մեղադրողը դատական քննությունը հետաձգելու միջնորդություն է ներկայացնում:

Ակնհայտ է, որ դատախազը չի կարող օրենքով վերապահված իր այդ լիազորություններն իրականացնել, եթե քրեական գործով ձեռք բերված ապացույցների ընդհանուր կարգով սահմանված հետազոտություն չի կատարվում: Թե ինչպես պետք է պարզվի մեղադրանքի հաստատված կամ չհաստատված լինելը կամ նոր հանգամանքների երևան գալը, հայտնի չէ:

Արագացված դատական քննության կարգը հակասում է նաև քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածով նախատեսված «արդարության և պատժի անհատականացման» սկզբունքին: Քր. դատ. օր.-ի 375³ հոդվածի 6-րդ մասի համաձայն՝ «դատարանը արագացված կարգով դատական քննության արդյունքում մեղադրական դատավճիռ կայացնելիս նշանակում է պատիժ, որը չի կարող գերազանցել կատարված հանցագործության համար նախատեսված առավել խիստ պատժի երկու երրորդը...»: Եվ այդ կարգը թույլատրվում է «այն հանցագործություններով, որոնց համար Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված պատիժը չի գերազանցում 10 տարի ժամկետով ազատազրկումը» (քր. դատ. օր. 375¹ հոդված 1-ին մաս): Ընդ որում, նշանակություն չունի՝ անձն առաջին անգամ է հանցանք կատարել, թե կրկնահանցագործ է: Օրենքում որևէ սահմանափակում չկա այդ հարցում: Իսկ դա նշանակում է, որ ծանր հանցագործությունների համար դատապարտվող անձը, թեկուզ կրկնահանցագործ, չի կարող տվյալ պատժաչափի երկու երրորդից ավելի պատժի ենթարկվել (հիշենք, որ ՀՀ քր. օր.-ի

19-ի հոդ. 4-րդ մասի համաձայն, առավելագույն պատիժը 10 տարի ազատազրկումը չգերազանցող դիտավորությամբ կատարված արարքը համարվում է ծանր հանցագործություն):

ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասի 322 հոդվածներից մի- այն 50 հոդվածով է ազատազրկման ձևով պատիժը գերազանցում 10 տարին, մնացած 272 հոդվածներով սահմանված են կամ ազատազրկման հետ կապ չունեցող պատժատեսակներ, կամ 10 տարին չըգերազանցող ազատազրկում: Այսինքն՝ նշված 272 հոդվածներով օրենքը թույլ է տալիս կիրառել արագացված կարգով դատական քննություն: Բայց դրանց թվում առկա են այնպիսի վտանգավոր հանցագործություններ նախատեսող հոդվածներ (իսկ դրանք քիչ

չեն), որոնցով արագացված դատական քննության կարգի կիրառումը ոչ միայն խախտում է պատժի անհատականացման սկզբունքը, այլև ակնհայտորեն թուլացվում է պայքարը նման հանցագործությունների դեմ: Օրինակ՝ քր. օր.-ի 175 հոդ. 2-րդ մասով նախատեսված ավագակությունը, որը կատարվել է մի խումբ անձանց նախնական համաձայնությամբ, խոշոր չափերով, կրկին անգամ և այլն, պատժվում է ազատազրկմամբ 6-10 տարի ժամկետով, այսինքն, չի գերազանցում 10 տարի ազատազրկումը: Նույն օրենսգրքի 112 հոդ. 2-րդ մասով նախատեսված՝ ծանրացնող հանգամանքներում դիտավորությամբ առողջությանը ծանր վնաս պատճառելը պատժվում է ազատազրկմամբ 5-10 տարի ժամկետով: Կամ 177 հոդ. 3-րդ մասով նախատեսված գողությունը, որը կատարվել է առանձնապես ծանրացնող հանգամանքներում, այդ թվում՝ նախկինում ավագակության, կողոպուտի, գողության և մի քանի այլ համասեռ հանցագործությունների համար երկու կամ ավելի անգամ դատված անձի կողմից՝ պատժվում է ազատազրկմամբ 4-8 տարի ժամկետով և այլն: Պարզ է, որ նման դեպքերում (որոնց թիվը, ինչպես նշեցինք, քիչ չէ) դատարանը որքան էլ ցանկանա դեկավարվել քր. օր.-ի 10-րդ հոդվածի այն պահանջով, ըստ որի՝ «կիրառվող պատիժը պետք է համապատասխանի հանցանքի ծանրությանը, դա կատարելու հանգամանքներին և հանցավորի անձնավորությանը», այսինքն՝ անհատականացնել պատիժը, չի կարող, քանի որ քր. դատ. օր.-ի 375³ հոդ. 6-րդ մասով արդեն իսկ սահմանափակվել է նրա այդ իրավունքը: Այլ կերպ, նա չի կարող երկու երրորդից ավելի պատիժ նշանակել այն անձի նկատմամբ, որը երկու կամ ավելի անգամ գողության համար դատապարտվելուց հետո կրկին կատարել է նույնասեռ հանցագործություն:

Իհարկե, մենք այն կարծիքին չենք, թե հանցագործությունների դեմ պայքարի հաջողությունը պայմանավորված է զուտ պատժի խստացմամբ: Անժխտելի է այն տեսակետը, որ «հանցագործության կանխման արդյունավետությունը կախված է ոչ թե պատժի դաժանությունից, այլ դրա անխուսափելիությունից...»⁸, սակայն չենք կարող չնշել, որ յուրաքանչյուր ժողովրդավարական իրավական պետություն, իրացնելով հանցանք կատարած անձանց քրեական հետապնդման իր մենաշնորհը, պետք է ձգտի անվրեպ պատժելու միայն մեղավորներին՝ իրենց մեղքի չափով, կատարվածի ծանրությանը, այն կատարելու հանգամանքներին ու հանցավորի անձնավորությանը համապատասխան, իսկ դրա համար պետք է հստակորեն պարզվեն գործի բոլոր էական, փաստական հանգամանքները, հանցավոր գործողության կամ անգործության էությունը, շարժառիթները, հանցակիցներից յուրաքանչյուրի դերը, պատճառված վնասի չափը, ինչպես նաև պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները: Օրենսդրական այս հայտնի պահանջների անշեղ կատա-

⁸ Беккариа Ч., *О преступлениях и наказаниях*, М., 1939, с. 308.

րումը կարող է երաշխավորվել հենց այնպիսի քրեական դատավարության օրենսգրքի առկայությամբ, որը զերծ կլինի իրավաբանական սխալներից ու հակասություններից:

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ УГОЛОВНОГО СУДОПРОИЗВОДСТВА В УГОЛОВНОМ КОДЕКСЕ РА

ЛАЛАЯН К. А.

Резюме

Многочисленные изменения и дополнения, нашедшие место в законе РА Об уголовном обязательстве, не всегда соответствуют основным требованиям законодательной техники, а имеющиеся недостатки являются результатом неверного либо небрежного перевода кодексов других стран или искаженного копирования, чем и обусловлена некоторая непоследовательность юридических формулировок и законодательных противоречий. Сказанное нашло отражение в неточных дефинициях по вопросу реализации оговоренных законом прокурорских полномочий, а также в положениях о непоследовательном соблюдении презумпции невиновности и в нарушении единого порядка расследования.